Հուսիկ Արա

Այսպես պարզ

Ուրիշ երանության չեմ վստահում.
դրախտը քո ժամանակն է երկրի վրա,
որ հիմա ու իմն է:

Ես չեմ ավարտվի,
որովհետև դու միշտ ես:
Մի ժամանակ կա տիեզերքում՝
քո ներկան,
որ լցվում է իմ մեջ,
և ես առանցքն եմ ամեն պտույտի:

Ես ձուկ եմ ջրում,
թռչուն եմ երկնքում
և գազան՝ որս անելիս,
երբ իմ եսը դու ես:

Ոչ կքանիստ Բուդդա;
ոչ էլ ձիավոր Մուհամեդ,
երկմտում եմ Քրիստոսին անգամ .
դու ես իմ անքննելին,
և իմ հավատն ունեմ ես:

Այդպես ուղիղ թերևս ասում են՝
ես սիրում եմ քեզ,

և այդքան պարզ սերն է միայն,
որ փնտրում ենք բարդ ու խճողված:

Ու թողնում եմ կտակ
այս շատ նյութական օրերում .
բանաստեղծած իմ տողերով
քո մարմինը թող քանդակեն՝
որպես արձան խենթիս: